ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«8» սեպտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-89/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ի 23.08.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 23.08.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի բ/ ենթակետը և գնման գործընթացի շրջանակներում կիրառել է կեղծ տվյալներ այն մասին, որ իբր ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի 15.07.2016թ. թիվ 1/73-3/18555-16 գրությամբ ՀՀ ՊՆ-ին տեղեկացվել է, որ Երևանի Ոսկերչական

Գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, որն իրականությանը չի համապատասխանում, քանի որ Երևանի Ոսկերչական Գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն նշված ցանկում ընդգրկված չէ:

Այն հիմնավորումը, որ Երևանի Ոսկերչական Գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի բ/ ենթակետը և գնման գործընթացի շրջանակներում ներկայացրել է կեղծ տվյալներ, մասնավորապես՝ Ընկերության հայտով ներկայացրած հավելված թիվ 2-ի 4-րդ կետով վերջինս հավաստել է, որ «ներառված չի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում», այնինչ՝ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի 15.07.2016թ. թիվ 1/73-3/18555-16 գրությամբ ՀՀ ՊՆ-ին տեղեկացվել է, որ Երևանի Ոսկերչական Գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չի համապատասխանում իրականությանը: Ուստի ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս գնահատող հանձնաժողովի, չէր կարող հիմք ընդունել վերը նշվածը և առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի բ/ ենթակետի պահանջներով՝ մերժել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/9» ծածկագրով ընթացակարգի արդյունքում 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններում Երևանի Ոսկերչական Գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ի կողմից ներկայացրած հայտը:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կրծքանշանների ձեռքբերման «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին գնահատող հանձնաժողովի 2016 թվականի օգոստոսի 16-ի թիվ 4.2 որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 29.08.2016թ. ժամը 15:00-ին ԳԲԽ-89/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ի ներկայացուցիչները պնդել են բողոքով ներկայացրած դիրքորոշումը և հայտնել են, որ գնահատող հանձնաժողովի՝ ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին 16.08.2016թ. թիվ 4.2 կետով կայացված որոշումն անհիմն է, քանի որ իրենց ընկերությունը ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում, և այդ առումով իրենք գնման գործընթացում որևէ կեղծ տվյալ չեն ներկայացրել: Առկա է միայն ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան գրությունը՝ իրենց ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերն ուսումնասիրելու վերաբերյալ, սակայն իրենց ընկերությունը գնման գործընթացում որևէ խախտում թույլ չի տվել և չի ներառվի նշված ցուցակում:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը բողոքի վերաբերյալ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 29.08.2016թ. ժամը 15:00-ին ԳԲԽ-89/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչներն առարկել են բողոքների դեմ և հայտնել են, որ Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ինչի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացել են նաև համապատասխան գրություն, իսկ նշված տեղեկատվությունը հրապարակված է նաև www.gnumner.am պաշտոնական համացանցային կայքում:

3. ԳԲԽ-89/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-89/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կրծքանշանների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Գնահատող հանձնաժողով), հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը, 16.08.2016թ. թիվ 4.2 կետով կայացված որոշմամբ Ընթացակարգը չկայացած է հայտարարել:

3. Գնահատող հանձնաժողովը 16.08.2016թ. թիվ 4.2 կետով կայացված որոշմամբ արձանագրել է, որ Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի բ/ ենթակետը և գնման գործընթացի շրջանակներում ներկայացրել է կեղծ տվյալներ, մասնավորապես՝ Ընկերության հայտով ներկայացրած հավելված թիվ 2-ի 4-րդ կետով վերջինս հավաստել է, որ «ներառված չի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում», այնինչ՝ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի 15.07.2016թ. թիվ 1/73-3/18555-16 գրությամբ ՀՀ ՊՆ-ին տեղեկացվել է, որ Երևանի Ոսկերչական Գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.07.2016թ. թիվ 1/73-3/18555-16 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությանը հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/41» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի արդյունքում Երևանի Ոսկերչական Գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ի հետ կնքվել է թիվ ՇՀԱՊՁԲ-7/41-3 պայմանագիրը, այն դեպքում, երբ նշված ԲԲԸ-ն ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

5. ՀՀ ֆինանսների նախարարության 14.07.2016թ. թիվ 1/73-3/18439-16 գրության հիման վրա՝ Կենտրոնի 25.07.2016թ. թիվ 176-Լ հրամանով Երևանի Ոսկերչական Գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար ստեղծվել է ՍՑ-ԳԲԽ-55/16 բողոքը քննող հանձնաժողով, և նշված բողոքով 16.08.2016թ. դրությամբ որոշում կայացված չի եղել:

<u>4. ԳԲԽ-89/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ի 23.08.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կրծքանշանների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետև նաև՝ Հրավեր), «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), գտնում է, որ Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ի 23.08.2016թ. ներկայացրած բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝ որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:*** Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում՝

ա. ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ,

գ. որպես ընտրված մասնակից մեկ անգամից ավելի հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

դ. օրենքով նախատեսված կարգով մասնակցի առնչությամբ կայացվել է որոշում գնումների գործընթացում հակամրցակցային վարքագծի՝ հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար,

ե. երբ առկա է սույն մասի 3-րդ կետով նախատեսված հանգամանքը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված ցուցակը հրապարակում է լիազորված մարմինը: Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո, գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է 6 ամսից մինչև 3 տարի ժամկետով՝ ելնելով սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված պայմանների խախտման ծանրությունից:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ***խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:***

Կարգի 21-րդ գլուխը սահմանում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու նպատակով գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու, բողոքի արդյունքում որոշում կայացնելու կարգը և պայմանները:

Վերը շարադրված իրավանորմերից ուղղակիորեն բխում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում **բացառապես գնումների բողոքարկման խորհրդի որոշմամբ:**

Կենտրոնը փաստում է, որ 16.08.2016թ. դրությամբ (Գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգը չկայացած հայտարարելու օրվա դրությամբ) առկա չի եղել գնումների բողոքարկման խորհրդի որոշում՝ Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին, հետևաբար 16.08.2016թ. դրությամբ Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն ներառված չի եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ուստի 16.08.2016թ. դրությամբ Ընկերության՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքը սահմանափակված չի եղել:

Միևնույն ժամանակ, Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Գնահատող հանձնաժողովը, արձանագրելով, որ Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և իրավունք չունի մասնակցելու Ընթացակարգին, 16.08.2016թ. թիվ 4.2 կետով կայացված որոշմամբ Ընթացակարգը չկայացած է հայտարարել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը:

Կենտրոնն արձանագրում է, որ Ընկերության՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված չլինելու և գնումների գործընթացին մասնակցելու իրավունքը սահմանափակված չլինելու պայմաններում, Գնահատող հանձնաժողովի կողմից Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի հիմքով Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում կայացնելն անհիմն է, ուստի նշված որոշումը ենթակա է դադարեցման:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնն առաջարկում է Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ի 23.08.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել՝ դադարեցնել ՀՀ պաշտպանության Նախարարության կարիքների համար կրծքանշանների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին 16.08.2016թ. թիվ 4.2 կետով կայացված որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ.Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-89/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Դավթյան